ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արմեն Դանիելյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսաչական մարմին) ղեկավար

2. Գործուղման վայրը, ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2025 թվականի ապրիլի 13-16-ին

3. Հրավիրող կողմը.

Հայկական կողմի նախաձեռնությամբ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Դանիելյանը Մոսկվայում հանդիպում է ունեցել ՌԴ անասնաբուժության և բուսասանիտարիայի հսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) ղեկավար Սերգեյ Դանկվերտի հետ՝ քննարկելու հետևյալ հարցերը.

1. Argus-Fito-ի և Armfitos-ի ինտեգրման աշխատանքների ավարտման, ներառյալ համակարգերի գործնական կիրառման ժամկետների քննարկումը:
2. Լիազոր մարմինների կողմից օգտագործվող թվային համակարգերի ինտեգրման հնարավորության դիտարկում:
3. Բուսասանիտարական ապրանքների հետագծելիության ապահովում:
4. Բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ծրագրերի սինքրոնացումը ռուսական ծրագրերի հետ:
5. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների կարանտինային բուսասանիտարական անվտանգության ապահովում:
6. Համագործակցություն Ռուսաստանի Դաշնություն տեղափոխվող բուսական արտադրանքի ֆումիգացիայի ապահովման նպատակով:

7. Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանման հարցում համագործակցության ամրապնդում:

8. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ընկալունակ կենդանիների, ինչպես նաև դրանց մսեղիքի և ենթամթերքների ներմուծման սահմանափակում:

9. Կենդանի կենդանիների փոխադարձ տեղաշարժերի հարցերի քննարկում:

5. Քննարկված թեմաները.

Սերգեյ Դանկվերտը և Արմեն Դանիելյանը քննարկել են Argus-Fito-ի և Armfitos-ի տեղեկատվական համակարգերի ինտեգրման աշխատանքների հարցերը: Կողմերը անդրադարձել են ինտեգրման աշխատանքների ավարտման ժամկետներին, ռուսական կողմը խոսք է տվել, որ մոտ ապագայում կվերացնեն առկա խնդիրները և աշխատաքները կիրականացվեն բնականոն հունով: Կողմերը քննարկել են համագործակցության ամրապնդման հեռանկարներն ու դրա զարգացմանն ուղղված հետագա քայլերը: Գերատեսչությունների ղեկավարները հետաքրքրված են եղել տեղեկատվական համակարգերի ինտեգրմանն ուղղված համագործակցության հնարավորություններով՝ նկատի ունենալով ժամանակակից պայմաններում պետությունների միջև միասնական տեղեկատվական հարթակների ստեղծման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Երկուստեք նշվել է, որ դա կնպաստի ապրանքների առաքումների ծավալների ավելացմանը, գործընթացների թափանցիկությանը, ապրանքների հետագծելիության և անվտանգության ապահովմանը, ինչպես նաև բեռների վերամշակման ժամանակ նյութական ծախսերի կրճատմանը: Դա նաև զգալիորեն կհեշտացնի վերահսկողական աշխատանքը՝ խնայելով ժամանակը և թույլ տալով երկու երկրների իրավասու մարմինների ներկայացուցիչներին առցանց հետևել սահմանի հատման, վկայականները չեղարկելու փաստերին, օպերատիվ արձագանքել խախտումներին: Արմեն Դանիելյանը և Սերգեյ Դանկվերտը գոհունակություն են հայտնել հանդիպման արդյունքներից՝ հաստատելով արդյունավետորեն համագործակցելու առաջնահերթությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձարցված կամ քննարկված հարցերը.

Ռուսաստանի Դաշնություն տեղափոխվող բուսական արտադրանքի վարակազերծման (ֆումիգացիա) ապահովման նպատակով համագործակցության շրջանակներում

հայկական կողմն իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու կազմակերպչական և խորհրդատվական աշխատանքներին:

Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանման հարցում ռուսական կողմը վերահաստատել է իր դիրքորոշումը, որ արտահանվող կաթնամթերքի հումքը պետք է լինի բացառապես հայկական ծագման:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Արմեն Դանիելյանն առաջարկել է կաթնամթերքի արտահանման պարագայում համատեղ ստուգումների փոխարեն միայն Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքների հիմա վրա թույլատրվի ՀՀ-ից ՌԴ կաթնամթերքի արտահանումը, որին ռուսական կողմը դրական է արձագանքել և պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը պաշտոնական գրություններով կերաշխավորի, որ տվյալ կազմակերպությունն արտահանում է միայն հայկական ծագման հումքով ապրանքատեսակ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 18 ապրիլի 2025թ.